ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«09» սեպտեմբերի 2018 թվականի N 111-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի № 07-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի «բ» կետի, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» №384-Ն որոշման 4-րդ կետի «զ» ենթակետը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում ստեղծել էներգետիկայի և լուսաքողարկման ծառայություն:
2. Հաստատել էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության կանոնադրությունը համաձայն հավելված №1-ի:

3. Հաստատել էներգետիկայի և լուսաքողարկման ծառայության անհատական կազմը համաձայն հավելված №2-ի:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարի 2012 թվականի փետրվարի 22-ի №07-Ա հրամանը:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարին:

ԱՐԹՈՒՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված №1
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
«09» սեպտեմբեր 2018թ. № 111-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Քաղաքացիական պաշտպանության էներգետիկայի և լուսաքողարկման ծառայությունը (այսուհետ Ծառայություն) ստեղծվում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունում:

2. Ծառայությունը ստեղծվում է ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության քաղաքացիական պաշտպանության պետի (Նախարարի) հրամանով:

3. Ծառայությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի «Քաղաքացիական պաշտպանության ծառայությունների ստեղծման, նախապատրաստման և գործունեության կարգը սահմանելու մասին» № 384-Ն որոշմամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով:

II. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Ծառայության նպատակն իր իրավասության սահմաններում քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացման ապահովումն է:

5. Ծառայության խնդիրներն են՝

1) էներգամատակարարման համակարգի գործունեության կայունության միջոցառումների պլանավորումն ու իրականացումը,

2) էլեկտրամատակարարման ցանցերում անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը,

3) լուսաքողարկման միջոցառումների պլանավորումը, կազմակերպումը և կատարման նկատմամբ հսկողության սահմանումը

III. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Ծառայությունն իր նպատակի և խնդիրների կենսագործման համար իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) էներգահամակարգի օբյեկտների իրադրության մասին իրական տեղեկության ստացման կազմակերպում, վերլուծում և գնահատում.

2) քաղաքացիական պաշտպանության համապատասխան պետին փրկարարական, անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

3) Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ հետևանքների գնահատում, դրա հիման վրա քաղաքացիական պաշտպանության ծառայության պլանների ճշգրտում.

4) Արտակարգ իրավիճակների և ռազմական դրության պայմաններում բնակչության կենսաապահովման և ռազմավարական նշանակության համակարգի օբյեկտների էլեկտրասնուցման անխափան ապահովումը.

5) էներգետիկական կառույցներում և ցանցերում վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը.

6) հիդրոտեխնիկական կառույցների փլուզումների դեպքում հնարավոր ջրածածկման գոտիների որոշումը, վտանգի կանխարգելման ու նվազեցման համապատասխան միջոցառումների մշակումը և իրականացումը.

7) էներգահամակարգի օբյեկտներում հնարավոր աղետների և խոշոր վթարների վերաբերյալ քաղաքացիական պաշտպանության ծառայությունների անձնակազմի և վտանգավոր գոտիներում հայտնված ազգաբնակչության ազդարարման կազմակերպումը.

8) լուսաքողարկման միջոցառումների կատարման նկատմամբ հսկողության իրականացում:

IV. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Ծառայության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է քաղաքացիական պաշտպանության պետը, իսկ ընթացիկ ղեկավարումը՝ Ծառայության պետը:

V. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8. Ծառայության պետը՝

1) հսկողություն է իրականացնում կազմակերպությունների Ծառայությունների, կազմավորումների ստեղծման, նրանց համալրման, հագեցման գործընթացի նկատմամբ.

2) իրականացնում է կազմակերպությունների քաղաքացիական պաշտպանության կազմավորումների պատրաստականության պլանային և արտապլանային ստուգումներ.

3) կազմակերպությունների Ծառայություններին ցույց է տալիս մեթոդական և գործնական օգնություն աշխատանքների պլանավորման և միջոցառումների իրականացման գործում.

4) մշակում է Ծառայության կանոնադրությունը և սահմանված կարգով ներկայացնում հաստատման.

5) կազմակերպում է Ծառայության ղեկավար կազմի և անձնակազմի ազդարարումն ու հավաքը.

6) քաղաքացիական պաշտպանության պետի որոշմամբ գործողության մեջ է դնում Ծառայության պլանները, ապահովում է դրանցով նախատեսված քաղաքացիական պաշտպանության միջոցառումների իրականացումը.

7) վնասված տարածքներում ապահովում է փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կատարումը.

8) կատարված աշխատանքների մասին զեկուցում է քաղաքացիական պաշտպանության պետին:

VI. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

9. Ծառայության անձնակազմի նախապատրաստումն իրականացվում է յուրաքանչյուր տարում անցկացվող հրամանատարաշտաբային և շտաբային ուսումնավարժություններում նրանց ներգրավմամբ:

10. Ծառայության ղեկավարի և անձնակազմի ուսուցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով:

Հավելված №2
ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և
բնական պաշարների նախարարի
«09» սեպտեմբերի 2018թ. № 111-Ա հրամանի

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԼՈՒՍԱՔՈՂԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

Տ.Արզումանյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ (Ծառայության պետ)
Հ. Բաղալյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության զորահավաքային բաժնի պետ
Վ. Մադոյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության էներգետիկ տարածաշրջանային շուկաների զարգացման բաժնի պետ
Ա. Պետրոսյան	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության էներգետիկայի վարչության ատոմային էներգետիկայի բաժնի պետ